# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌԻ ՄԱՐԶ
# ԳՈՒԳԱՐՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

---

ՀՀ Լոռու մարզի Գուգարք գյուղ, Հեռ. 5-24-76

N 14
*18 հունվար 2018թ.*

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ**
**ՄԱՐԶՊԵՏ**
**ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Նալբանդյան.

Ներկայացնում ենք Գուգարք համայնքի ղեկավարի 182-187 որոշումները:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Աշոտ Աշուղյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԳՈՒԳԱՐՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԻ

13 12. 2017թ.

# ՈՐՈՇՈՒՄ No 182.

06-031-0012-0028 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱ-ԿԱՆԳՆԵԼՈՒ, ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԳՈՒՅՔԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

*Հիմք ընդունելով քաղաքացի Ասատուր Լյովայի Սաքանյանի դիմումը, հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 21.11.1991թ. թիվ 11 որոշումը, «Մել և Միլ» գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն ՍՊԸ-ի կողմից կազմված հատակագիծը,*

*Ղեկավարվելով ՀՀ կառավարության 29.12.2005 N 2387 Ն որոշումով, ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով՝*

## ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԸ ՈՐՈՇԵՑ.

1. Վերականգնել և օրենքի ուժով ճանաչել 06-031-0012-0028 ծածկագրի տակ գտնվող 0.12298հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ Ասատուր Լյովայի Սաքանյանի (ծնվ. ) սեփականության իրավունքը:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասից հատկացված 0.12հա հողամասն անհատույց սեփականության իրավունքով վերահատկացնել, իսկ հատկացվածից ավելի զբաղեցրած 0.00298հա հողամասի նկատմամբ օրենքի ուժով ճանաչել Ասատուր Լյովայի Սաքանյանի սեփականության իրավունքը:
3. Անշարժ գույքը չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ:
4. Հողամասի սահմանները որոշվում են որակավորման վկայական ստացած անձի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծով:
5. Անշարժ գույքին տրամադրել հետևյալ փոստային հասցեն՝

գ. Գուգարք Էներգետիկների 4-րդ փողոց 12

6. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռու մարզի տարածքային ստորաբաժանումում:

Գուգարքի համայնքապետ՝ Ա. ԱՇՈՒՂՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԳՈՒԳԱՐՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԻ

14 12 2017թ.

# ՈՐՈՇՈՒՄ No 183

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՈՒԳԱՐՔԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-031-0009-0001-001-026 ԾԱԾԿԱԳՐԻ, ԳԱՅԱՆԵ ԼՅՈՎԱՅԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԱՐԱՆԻ (ՀԱՄԱՁԱՅՆ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ 11.09.2010Թ. ՏՐՎԱԾ N 1932292 ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԿԱՅԱԿԱՆԻ) ՃՇՏՎԱԾ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 22 կետով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. N 2387Ն որոշմամբ՝*

## ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԸ ՈՐՈՇԵՑ.

Գուգարքի կադաստրային քարտեզի 06-031-0009-0001-001-026 ծածկագրի, Գայանե Լյովայի Գևորգյանին պատկանող բնակարանի համար հաստատել հետևյալ ճշտված փոստային հասցեն՝
գ. Գուգարք Էներգետիկների 5-րդ փողոց շենք 7 բնակարան 26

Գուգարքի համայնքապետ՝ Ա. ԱՇՈՒՂՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԳՈՒԳԱՐՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԻ

13.12. 2017թ.

# ՈՐՈՇՈՒՄ No 184

06-031-0012-0028 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱ-ԿԱՆԳՆԵԼՈՒ, ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԳՈՒՅՔԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

*Հիմք ընդունելով քաղաքացի Ասատուր Լյովայի Սաքանյանի դիմումը, հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 21.11.1991թ. թիվ 11 որոշումը, «Մել և Միլ» գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն ՍՊԸ-ի կողմից կազմված հատակագիծը,*

*Ղեկավարվելով ՀՀ կառավարության 29.12.2005 N 2387 Ն որոշումով, ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածով՝*

## ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԸ ՈՐՈՇԵՑ.

1. Վերականգնել և օրենքի ուժով ճանաչել 06-031-0012-0028 ծածկագրի տակ գտնվող 0.12298հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ Ասատուր Լյովայի Սաքանյանի (ծնվ. 1964թ.), Արմինե Օրուջի Սաքանյանի (ծնվ. 1965թ.), Քրիստին Ասատուրի Սաքանյանի (ծնվ. 1986թ.) և Արտուր Ասատուրի Սաքանյանի (ծնվ. 1986թ.) համատեղ սեփականության իրավունքը:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասից հատկացված 0.12հա հողամասն անհատույց սեփականության իրավունքով վերահատկացնել, իսկ հատկացվածից ավելի զբաղեցրած 0.00298հա հողամասի նկատմամբ օրենքի ուժով ճանաչել Ասատուր Լյովայի Սաքանյանի, Արմինե Օրուջի Սաքանյանի, Քրիստին Ասատուրի Սաքանյանի և Արտուր Ասատուրի Սաքանյանի համատեղ սեփականության իրավունքը:
3. Անշարժ գույքը չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ:
4. Հողամասի սահմանները որոշվում են որակավորման վկայական ստացած անձի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծով:
5. Անշարժ գույքին տրամադրել հետևյալ փոստային հասցեն՝

գ. Գուգարք Էներգետիկների 4-րդ փողոց 12

6. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռու մարզի տարածքային ստորաբաժանումում:
7. Ուժը կորցրած ճանաչել համայնքապետի 13.12.2017թ. N 182 որոշումը:

Գուգարքի համայնքապետ՝ Ա. ԱՇՈՒՂՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԳՈՒԳԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզ գ. Գուգարք

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 19 » ~~Հոկտեմբերի~~ դեկտեմբեր 2017 թվականի N 185

### ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով, ՀՀ Հողային օրենսգրքով, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 01/06/2010թ. Թիվ 186-Ն հրամանով, ՀՀ կառավարության 13.10.2005թ. թիվ 1916-Ն որոշմամբ, ՀՀ կառավարության 2005թ. Դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 29.12.2011թ. Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաները կազմելու կարգը հաստատելու մասին թիվ 1918 Ն որոշման հաստատված կարգի 17-րդ կետի պահանջների` հիմք ընդունելով հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացությունը 58 20.06.2017թ., համայնքի ավագանու որոշումը

Որոշում եմ

1. Յիմք ընդունելով հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացությունը և առաջնորդվելով ՅՅ հողային օրենսգրքի դրույթներով Կաթնաջուր համայնքի վարչական սահմաններում գտնվող 06-031-0113- ծածկագրի տակ գտնվող 0.52323հա գյուղատնտեսական արոտավայր նպատակային և գործառնական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը փոփոխել որպես Էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթ. նշանակության հողամաս, իսկ հողամասի գործառնական նշանակությունը` կոմունալ ենթակառուցվածքների հողամաս:

2. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի հետ կապված սուբյեկտների անճշտությունների ուղղման համար Գուգարք համայնքի վարչական սահմաններում գտնվող 06-031-113 ծածկագրի տակ գտնվող 0.52323 հա էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների նպատակային նշանակության հողամասի նկատմամբ, քանի որ գոյություն չունեն որևէ իրավունք հաստատող փաստաթղթեր և այն ՀՀ կառավարության ՀՀ կառավարության 13,10,2005թ. թիվ 1916-Ն որոշմամբ սխալմամբ փոխանցված չէ համայնքին, ուստի առաջնորդվելով ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 186-Ն հրամանի II գլխի կետերով ավագանին որոշում է նշված հողամասի նկատմամբ ճանաչել Գուգարք համայնքի սեփականության իրավունքը:
3. 10-օրյա ժամկետում տեղեկացնել անշարժ գույքի նկատմամբ իրավունքները գրանցող պետական մարմին՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճեն:
4. Օրենքով սահմանված կարգով փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի հողային ֆոնդի տարեկան ընթացիկ հաշվառման տվյալներում և համայնքի հողային հաշվեկշռում
5. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
6. Անշարժ գույքը չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ:
7. Անշարժ գույքին տրամադրել փոստային հասցե
8. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռիի տարածքային ստորաբաժանումում:

Համայնքի ղեկավար՝ Ա. Աշուղյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԳՈՒԳԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 186

**20 դեկտեմբերի 2017**

ՈՒՍՄԱՆ ՎՃԱՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 48 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը և 46 հոդվածի 5 կետը՝*

Փոխանցել Միեր Հայկի Ավետյանի ուսման վճարը՝ 200000դրամ:

ԳՈՒԳԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԱՇՈՒՂՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՈՒԳԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂՈԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի գ.Գուգարք

### Ո Ր Ո Շ Ու Մ

«21»Դեկտեմբերի 2017թվականի N 187

### ՀՈՂԱՄԱՍԻ և ՇԻՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 08122017-06-0029 վկայականը, քաղաքացի Կ. Եղինյանի դիմումը, ՀՀ Լոռու մարզպետի 19.12.2017թ. հաստատված համաձայնությունը հողամասի գործառնական նշանակության փոփոխության վերաբերյալ, հաստատված հողամասի հատակագիծը, Համայնքի ավագանու որոշումը հողամասի գործառնական նշանակության փոփոխելու թույլտվություն տալու մասին, Ղեկավարվելով ՀՀ Հողային օրենսգրքով, ՏԻՄ-ի•մասին ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, ՀՀ Քաղաքացիական օրենսգիրքը, ՀՀ կառավարության 02/02/2002թ. Թիվ 88 որոշմամբ

Որոշում եմ

1. Գուգարք համայնք Կոտեջային 10 փողոց թիվ 5 փոստային հասցեում գտնվող 06-031-0028-0032 ծածկագրերի տակ գտնվող բնակավայրերի նշանակությունը բնակելի կառուցապատման 0.075հա հողամասի գործառնական նշանակություն գործող օրենսդրությամբ, ՀՀ հողային օրենսգրքի դրույթների և Լոռու մարզպետի 19.12.2017թ հաստատված հողամասի գործառնական նշանակության փոփոխության վերաբերյալ համաձայնության համապատասխան փոփոխել որպես հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասի, իսկ կառուցապատված հողամասում գտնվող բնակելի տան գործառնական նշանակությունը փոփոխել որպես հասարակական գործառնակամ նշանակության շինության _Ավտոտեխսպասարկման կայան : Շինության գործառնական նշանակությունը փոփոխված է առանց ճարտարապետահատակագծային առաջադրանքի տրամադրման, քանի որ շինարարական աշխատանքներ կատարված չեն, ըստ որի շինարարության թույտվություն տրամադրելու անհրաժեշտություն չկա /ՀՀ կառավարության 19/03/2015թ. թիվ 596-Ն որոշում/:
2. Գործառնական նշանակությունը փոփոխված հողամասը չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
3. Օրենքով սահմանված կարգով փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի հողային ֆոնդի տարեկան ընթացիկ հաշվառման տվյալներում և համայնքի հողային հաշվեկշռում:
4. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. Աշուղյան